Արձանագրություն N 4

«ՍՄԳՀ-ԳՀԾՁԲ-01/19-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

հ.Գորայք

«19» սեպտեմբեր 2019թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան-երկրաբան-ինժեներ
հանձնաժողովի անդամներ՝ Ս.Մուսաթյան- առաջատար մասնագետ- հաշվապահ
Ս.Անտոնյան - սոց.աշխատող
հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Գրիգորյան-գնումների համակարգող

1.ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին

1.1. Ընդունել ի գիտություն.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Քարազարթ» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ «ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ»ՍՊԸ-ն ուներ հարկային պարտավորություն: Մասնակիցը ծանուցվել է արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ, ծանուցմանը կցվել է ստացված եզրակացությունը, առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը շտկել է նշված անհամապատասխանությունը, որի համար ներկայացրել է պարտավորությունների շտկման վերաբերյալ փաստաթուղթը:

1.2. Ընտրված մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1"2"1 «ՍԱՄԱՐՏՇԻՆ»ՍՊԸ-ի մասնագիտական փորձառությունը, տեխնիկական միջոցները և աշխատանքային ռեսուրսները համապատասխանում են հրավերի պահանջներին:

1"2"2 «Քարազարթ» ՍՊԸ-ի <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշի գնահատման ժամանակ, մասնակցի ներկայացրած տվյալների (տնտեսական գործունեության համանման համարվելը) իսկությունը ստուգելու նպատակով, կարգի 67-րդ կետի հիման վրա հարցում է ուղարկվել Սյունիքի մարզպետարան: Սահմանված ժամկետում գրավոր եզրակացություն չի տրվել:

Առաջնորդվելով կարգի 65-րդ կետի պահանջներով (հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի) հանձնաժողովը որոշեց մասնակցի <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

2.Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

2.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄԳՀ-ԳՀԾՁԲ-01/19-2» ծածկագրով գնման

ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և մասնակիցների հայտը գնահատել «բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

3.«ՍՄԳՀ-ԳՀԾՁԲ-01/19-2» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

3.1. Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄԳՀ-ԳՀԾՁԲ-01/19-2» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից են հայտարարվում.

- № 1 չափաբաժնի համար «Քարազարթ»ՍՊԸ-ին,
- № 2 չափաբաժնի համար «ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ»ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1. Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը «ՍԱՄԱՐՏ-ՇԻՆ»ՍՊԸ-ին և «Քարազարթ»ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը № 1 չափաբաժնի համար անգործության ժամկետ չսահմանել:

4"3 Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը № 2 չափաբաժնի համար անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

Նախագահ՝ ---------- Ա. Մարգարյան

Անդամ՝ ---------- Ս. Մուսաթյան

---------- Ս. Անտոնյան

Քարտուղար՝ ---------- Ս.Գրիգորյան